

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #01

Հունվար 2018

Երևան, Հայաստան



Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մանրի վերամշակում	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	9
R&D	12
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	14
Կոսմետիկա	16
Դեղագործություն	18
Այլ ոլորտներ	20
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	21
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	23

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մննդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Խորվաթական օրգանիկ թեյեր և խառնուրդներ խոտաբույսերից

Օրգանական թեյի խառնուրդներ, թեյեր, էկոլոգիական կաթիլներ և խոտացված բույսերի վրա հիմնված ապրանքներ արտադրող ընկերությունն առաջարկում է իր արտադրանքը դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում այնպիսի գործընկերներին, ինչպիսիք են դեղատները (մեծածախ և մանրածախ), առողջ սնունդ վաճառող խանութները և առողջ սննդի բաժին ուենցող սուպերմարկետները:

Ծածկագիր. BOHR20171019001

Լիտվական ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ և առաջարկում է իր ծառայությունները

Լիտվական ընկերությունը նպաստում է առողջ ապրելակերպի ավանդույթներին և արտադրում է ֆունկցիոնալ ապրանքներ, ինչպիսիք են բազմատեսակ հատապտուղները, բանջարեղենը և սերմացուի փոշին: Ընկերությունն այժմ փնտրում է արտասահմանյան գործընկերներ՝ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման, առևտրային գործակալության կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOLT20171129002

Մերբական ընկերությունը փնտրում է գործընկերներ ֆինանսական համաձայնագրի շրջանակում

Մերբական ընկերությունը, որն արտադրում է լիովին բնական բաղադրությամբ առանց ածխաջրերի և գլյուտենի օրգանական նախուտեստներ, նպատակ ունի ընդլայնել արտադրանքը (նոր սարքավորումների ձեռքբերում, վաճառք արտաքին շուկայում): Ընկերությունը փնտրում է գործընկեր՝ ֆինանսական համաձայնագրի շրջանակում համագործակցելու համար:

Ծածկագիր. BORS20171211001

Լեհական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ

Լեհական ընկերությունը, որը զբաղվում է օրգանական սննդամթերքի արտադրությամբ ու մշակմամբ ինչպիսիք են՝ օրգանական հրուշակեղենը, հացը, խմորեղենը և քաղցրավենիքները, ցանկանում է արտահանել իր արտադրանքը եվրոպական շուկաներում: Նախատեսվում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման կամ առևտրային գործակալության պայմանագրերի շրջանակներում:

Ծածկագիր. BOPL20171201001

Շվեդական ընկերությունը փնտրում է վերավաճառողներ և դիստրիբյուտորներ

Շվեդական առևտրային ընկերությունը փնտրում է վերավաճառողներ, դիստրիբյուտորներ, սննդի և հյուրանոցների ցանցեր ու առաջարկում է բարձր որակի գարեջրի, զինու և հանքային ջրի իր լայն տեսականին:

Ծածկագիր. BOSE20171031001

Գործարար համագործակցության հարցումներ

Մենդի ոլորտում գործող ռուսական ընկերությունը փնտրում է մատակարարներ

Մենդի ոլորտում գործող ռուսական ընկերությունը դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում հմագործակցելու նպատակով փնտրում է սխտորի, մարինացված կոճապղպեղի, արքայախնձորի և մարինացված սնկի մատակարարների:

Ծածկագիր. BRRU20171207001

Մեղր արտադրող ռումինական ընկերությունը ցանկանում է համագործակցել

Ռումինիայի հարավ-արևելքում տեղակայված ընկերությունը, որը մասնագիտացած է մեղրի տարբեր տեսակների արտադրության, փաթեթավորման և առևտրի մեջ, փնտրում է մեղրի մեծածախ մատակարարների կամ ուղղակի արտադրողների: Մեղրը պետք է լիովին համապատասխանի ԵՄ կանոնակարգերին: Ընկերությունը շահագրգռված է դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման շրջանակում երկարտև համագործակցության հաստատմամբ:

Ծածկագիր. BRRO20171129001

Կիպրոսում գործող դիստրիբյուտորը փնտրում է սննդամթերքի, խմիչքների և կենցաղային ապրանքների արտադրողներ

Կիպրոսյան ընկերությունը, որը մասնագիտացած է բոլոր տեսակի սննդամթերքի, խմիչքների ինչպես նաև կենցաղային ապրանքների ներմուծման բնագավառում, առաջարկում է դիստրիբյուտորական ծառայություններ: Ընկերությունը փնտրում է արտադրողների Եվրոպայում և նրա սահմաններից դուրս նրանց արտադրանքը Կիպրոսում վաճառելու նպատակով:

Ծածկագիր. BRCY20170728001

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Գերմանական ընկերությունն առաջարկում է համագործակցություն՝ ենթակապալառուի կամ ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում

Գերմանական ընկերությունը ավելի քան 30 տարի գործում է տեխնիկական տեքստիլի մշակման ոլորտում: Ընկերությունն օտարերկրյա արտադրողներին առաջարկում է տեխնոլոգիական գործընթացների բարելավման և տեխնիկական տեքստիլի արտադրության ծախսերի կրճատման նպատակով համագործակցել ենթակապալառուի կամ ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BODE20160602001

Ալբանական արդյունաբերական նշանակության լվացքատունը ցանկանում է համագործակցել աութսորսինգային և ենթակապալառուի պայմանագրի շրջանակում

Տասներկու տարի հագուստի ոլորտում մասնագիտացած ալբանական արդյունաբերական լվացքատունը փնտրում է արդյունաբերական ընկերություններ՝ աութսորսինգային պայմանագրի շրջանակում համագործակցելու նպատակով: Ընկերությունն աշխատում է առանձին ուղղություններով և մասնագիտացած է լվացքի, մաքրման, գեղարվեստական աշխատանքների, արդուկի և փաթեթավորման ծառայությունների մատուցման մեջ: Ենթակապալառուի ծառայությունների մատուցման շրջանակում համագործակցությունը ևս կլինի ընդունելի ընկերության կառավարման բարձր որակը ապահովելու համար:

Ծածկագիր. BOAL20161102001

Ռուսական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է լյուքս դասի հագուստի և աքսեսուարներների արտադրության բնագավառում, ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման շրջանակում:

Ծածկագիր. BORU20171207002

Իտալական ՓՄՁ-ն առաջարկում է համագործակցել արտադրական կամ առևտրային գործակալի պայմանագրի շրջանակներում:

Իտալական ՓՄՁ-ն արտադրում է նորարարական կահավորման գործվածքներ բնակելի և բացօթյա տարածքների համար: Հավաքածուն ունի ժամանակակից տեսք և ներառում է ծալքավոր տրիկոտաժե գործվածք, տարբեր քաշի, գույնի և օրինաչափության թավշյա գործվածք և այլն: Գործվածքները կարող են օգտագործվել բազմոցների, աթոռների, նստարանների, բարձերի և վարագույրների պատրաստման համար: Ընկերությունը ցանկանում է համագործակցել արտադրական և առևտրային գործակալի պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BOIT20170927001

Լիտվական ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում

Լիտվական ընկերությունը սպիտակեղենի և գործվածքի արտադրության ոլորտում ունի 17 տարվա փորձ: Ընկերությունն առաջարկում է հակաալերգեն սպիտակեղենային գործվածք: Ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորների, մանրածախ առևտրով զբաղվողների և փոքր խանութների հետ՝ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BOLT20171116001

Խորվաթական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորների կամ գործակալների

Բժշկական թերապևտիկ արտադրանքի իրացմամբ զբաղվող խորվաթական ընկերությունը մշակել է տեքստիլե արտադրանքների հավաքածու՝ ջերմային թթվածնի և թթվածնի արտանետման հատկություններով, օգտագործելով հատուկ մանվածք: Մշակված հագուստները կարող են բարձրացնել արյան շրջանառությունը և թթվածնի մակարդակը հյուսվածքներում մինչև 29%: Նրանք պատրաստվում են բնական տեքստիլից՝ օգտագործելով ինֆրակարմիր տեխնոլոգիաների կիրառումը: Իր արտադրանքը նոր շուկաներում ընդլայնելու նպատակով ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ առևտրային կամ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOHR20160323002

Գործարար համագործակցության հարցումներ

Մեծ Բրիտանական ընկերությունը փնտրում է սպիտակեղեն և բամբակյա հյուսվածքային պարագաներ մատակարարողների

Հյուսիսային Իռլանդիայում գործող ընկերությունը արտադրական պայմանագրի շրջանակներում ցանկանում է համագործակցել այն գործընկերների հետ, ովքեր կարող են արտադրել սպիտակեղեն, և/կամ 100% բամբակյա գործվածքներ: Ընկերությունը փնտրում է նաև նորարարական խոհանոցային տեքստիլե պարագաներ՝ իրենց արտադրության շրջանակն ընդլայնելու նպատակով:

Ծածկագիր. BRUK20171106001

Ռուսական արտադրողը փնտրում է արքեսուարներ և պարագաներ՝ երեխաների հագուստի արտադրության համար

Կուրսկի շրջանում գտնվող ռուսական ընկերությունը մասնագիտացած է 2-ից 12 տարեկան երեխաների համար (մանկապարտեզ (մինչև 92 սմ հասակի), դպրոցական (դեռահաս) խմբի համար (մոտ 152-170 սմ հասակի) տրիկոտաժե հագուստի արտադրության ոլորտում և ցանկանում է համագործակցել երեխաների հագուստի արտադրության համար արքեսուարներ և տարբեր պարագաներ արտադրողների հետ:

Ծածկագիր. BRRU20160906001

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Փայտից շինարարության ոլորտում մասնագիտացած լեհական ընկերությունն առաջարկում է փայտե տարրեր և այգիների ճարտարապետություն

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացված է փայտե կոնստրուկցիաների նախագծման և կառուցման ոլորտում, առաջարկում է արտադրական և ենթակապալառուի ծառայություններ ընկերություններին: Ընկերությունը փնտրում է նաև փայտե այգիների ճարտարապետական տարրերի դիստրիբյուտորներ:

Ծածկագիր. BOPL20171127003

Մեծ Բրիտանական ՓՄՁ-ն փնտրում է դիստրիբյուտորներ

Սկսած 2001 թ-ից այս Բրիտանական ընկերությունն արտադրում է պողպատով ձևավորված շինանյութեր: Ամբողջական ապրանքները ներառում են մուտքի վահանակներ, օդափոխիչի կափույրներ, պողպատե բաղադրիչներ և մետաղական պարագաներ: Ընթացիկ արտադրանքի շրջանակում են պատի և առաստաղի մուտքի վահանակները, որոնք արտադրվում են ամենաբարձր որակի չափանիշներով: Այժմ նրանք փնտրում են դիստրիբյուտորներ՝ ներկայիս արտադրանքի տարածման համար:

Ծածկագիր. BOUK20171211001

Կրեատիվ նախագծման ծառայություններ, որոնք առաջարկվում են Հունգարական ընկերության կողմից

Հունգարական ընկերությունը, որը մասնագիտացած է ճարտարապետական և նախագծման աշխատանքներում, առաջարկում է իր ծառայությունները որպես ենթակապալառու: Հիմնական գործունեությունն ամբողջական ճարտարապետական նախագծումն է, նախագծի նախապատրաստում, շինարարական թույլտվություն, շինարարական ծրագրեր (բնակելի շենքեր, հասարակական շենքեր, արդյունաբերական օբյեկտներ): Ընկերությունն իր ծառայություններն առաջարկում է որպես ենթակապալառու:

Ծածկագիր. BOHU20160819001

Գերմանական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորների

Գերմանական ընկերությունը, որը հիմնադրվել է 2003 թվականին, մասնագիտացած է ջրամեկուսիչ համակարգերի արտադրության ու մշակման բնագավառում: Ընկերությունն առաջարկում է նոր և հին շենքերի մասնագիտացված իզոլյացման համակարգեր: Ընկերությունը փնտրում է հիդրոմեկուսիչ համակարգեր վերականգնող ներարկման աշխատանքների ոլորտում փորձառություն ունեցող վաճառքի գործընկերների՝ առևտրային գործակալի կամ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BODE20170713002

Իտալական արտադրողը ցանկանում է համագործակցել ենթակապալառուի ծառայությունների մատուցման շրջանակում

Իտալական ընկերությունը, որը մասնագիտացված է փայտե, մետաղական և բյուրեղյա աստիճանների արտադրության բնագավառում, փնտրում է ճարտարապետական և տեխնիկական գործունեություն իրականացնող ընկերություններ՝ ենթակապալառուի ծառայությունների մատուցման շրջանակում համագործակցելու համար:

Ծածկագիր. BOIT20170411002

Լեհական ընկերությունը ցանկանում է համագործակցել ենթակապալառուի և դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում

Այս լեհական ընկերությունը շենքերի ճակատային և ներքին կցամասերի համար այլումինե կոմպոզիտային վահանակների (ACP) մատակարար է հանդիսանում: Ընկերությունը ցանկանում է հանդես գալ որպես ենթակապալառու կապալառուների, ճարտարապետների և այլոց համար: Ընկերությունը փնտրում է նաև շինանյութերի դիստրիբյուտորների:

Ծածկագիր. BOPL20170616001

Գործարար համագործակցության հարցումներ

Ռուսական դիստրիբյուտորը փնտրում է մատակարարներին

Առևտրով և շինարարությամբ զբաղվող ռուսական ընկերությունը փնտրում է սանտեխնիկա (խառնիչներ և լողասենյակային կերամիկա) մատակարարողների: Ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BRRU20171116001

Ռումինական ընկերությունն առաջարկում է դիստրիբյուտորական ծառայություններ

Շինարարական նյութերի դիստրիբյուցիայի բնագավառում մասնագիտացած ռումինական ընկերությունը ցանկանում է համագործակցել արտադրողների հետ՝ դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում:

Ծածկագիր. BRRO20170510002



H2020 - NMBP-20-2018: Ծրագրային տանը պահանջվում է մշակել և կառուցել թվային հարթակ, որը կբարձրացնի ԵՄ եռակցման սարքավորումների ընկերությունների կարողությունը՝ բարձր որակի սպառման համար:

Անգլիայի արևելքում հիմնված հետազոտական կենտրոնը մշակում է առաջարկ՝ H2020 - NMBP-20-2018-ի շրջանակներում: Ծրագրի նպատակն է զարգացնել թվային հարթակ, որը կբարձրացնի ԵՄ արտադրողների և եռակցող սարքավորումների մատակարարների կարողությունները՝ բարձր որակի սպառումը ապահովելու համար: Սա կխթանի եվրոպական եռակցման սարքավորումների արտադրողների համաշխարհային շուկայի մրցունակությունը: Նրանք փնտրում են ծրագրային տուն, որը կնախագծի և կմշակի թվային հարթակը:

Ծածկագիր. RDUK20171212001

LC-EEB-02-2018: Շենքի տեղեկատվական մոդելավորում՝ հարմարեցված արդյունավետ վերանորոգմանը: Փնտրվում է գործընկեր

Գերմանական ոչ-բուհական հետազոտական կազմակերպությունը մշակել է առաջարկ "H2020 LC-EEB-02-2018 շենքի տեղեկատվական մոդելավորում, հարմարեցված արդյունավետ վերանորոգմանը" ծրագրի շրջանակում: Ծրագիրը վերաբերում է առկա շենքերից հավաքագրված տվյալների հիման վրա շենքերի տեղեկատվական մոդելների (BIM) վերազինման արագացմանը՝ ինտեգրելով սմարթ բջջային սարքերի օգտագործման վրա հիմնված վերանորոգման մոտեցումների համար: Կազմակերպությունը փնտրում է արդյունաբերական գործընկերների, մասնավորապես շինարարական/վերակառուցողական ընկերություններ՝ հետազոտական համագործակցության նպատակով:

Ծածկագիր. RDDE20171205002

H2020-SC1-DTH-08-2018: էլեկտրոնային առողջապահական հաշվետվությունների ստանդարտ եվրոպական հարթակի մշակման համար պահանջվում են սեմանտիկ վեբ լուծումների, ISO EN13606-ի կամ բաց EHR (էլեկտրոնային առողջապահական հաշվետվությունների)-ի ոլորտի փորձագետներ և հիվանդանոցներ, որոնք ապահովում են տվյալների մեծ բազաներ:

Իսպանական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է առողջապահական լուծումներում (eHealth), փնտրում է գործընկերներ H2020-SC1-DTH-08-2018 «Ստեղծել Եվրոպական փոխգործակցող էլեկտրոնային առողջապահական հաշվետվությունների փոխանակման նախատիպը» մրցույթի շրջանակներում առաջարկ ներկայացնելու նպատակով: Ծրագիրը նպատակ ունի զարգացնել եվրոպական ամպային հարթակ՝ էլեկտրոնային առողջապահական հաշվետվությունների (EHR) ստանդարտիզացիայի նպատակով: Ընկերությունները, գիտահետազոտական կենտրոնները կամ գիտական հաստատությունները, փորձառություն որոնք ունեն սեմանտիկ վեբ լուծումների և էլեկտրոնային առողջապահական հաշվետվությունների նախագծման և մշակման գործում, ինչպես նաև հիվանդանոցները, որոնք ապահովում են տվյալների մեծ բազա, կարող են հանդես գալ որպես գործընկեր:

[Ծածկագիր. RDES20171129001](#)

H2020: LC-SC3-RES-12-2018՝ Կոնստրեկտիվ ծրագիրը ավարտին հասցնելու համար պահանջվում է ջերմային խողովակների ջերմափոխանակիչներ արտադրող

Անգլիայի Արևելքում գտնվող գիտահետազոտական կենտրոնը մշակում է LC-SC3-RES-12-2018 դիմումի համար առաջարկ: Ծրագրի նպատակն է մշակել երկրաջերմային էներգիայի տեխնոլոգիա, ճկուն, դիմացկուն և խելամիտ գործողությունների շարք ապահովելու համար: Նրանց անհրաժեշտ է ջերմային խողովակների ջերմափոխանակիչների արտադրող կոնստրեկտիվ ծրագիրը ավարտին հասցնելու համար: Գործընկերը պետք է մշակի ջերմափոխանակիչ, որը կապահովի ջերմային էներգիայի փոխանցման գործընթացը ջերմատնից դեպի պահեստ:

[Ծածկագիր. RDUK20180102001](#)

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

SS լուծումներ և SS անվտանգություն

Դինամիկ զարգացող հունգարական ընկերությունը, որը մասնագիտացած է SS լուծումների և անվտանգության, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների ու պետական հատվածի համար տվյալների ցանցի ապահովման, տեխնիկական սպասարկման և խորհրդատվության բնագավառում, ցանկանում է համագործակցել աութսորսինգի, ծառայությունների մատուցման կամ ենթակապալառուի պայմանագրերի շրջանակում:

Ծածկագիր. BOHU20171027001

Լատվիական ընկերությունը ցանկանում է համագործակցել

Լատվիական SS ընկերությունը, որն ունի 25 տարվա փորձ SS և հեռահաղորդակցման ոլորտներում, ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում ցանկանում է համագործակցել SS, լոգիստիկ, դիզայներական/ճարտարապետական, ինչպես նաև ֆինանսական ոլորտներում ներգրավված գործընկերների հետ: Ընկերությունը հատկապես հետաքրքրված է այն պոտենցիալ գործընկերների հետ համագործակցությամբ, որոնք ցանկանում են իրենց գործը հիմնել Լատվիայում:

Ծածկագիր. BOLV20171103001

Ռումինական S2S ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման շրջանակում

Ռումինական S2S ընկերությունը տրամադրում է բազմակողմանի լուծումներ, որոնք ներառում են ինչպես ծրագրային ապահովման, այնպես էլ ապարատային լուծումների տեխնոլոգիաներ, որոնց նպատակն է ձևափոխել մասնավոր ոլորտների հետ մարդկանց շփման և համագործակցության ուղիները: Նրանք ստեղծել են նորարարական IoT սարքեր, որը հոյակապ

միջոց է հանդիսանում այն մարդկանց համար, ովքեր որոնում են անվտանգ մուտք ապահովելու արդի եղանակներ: Ընկերության հաճախորդներն են բիզնեսի կառավարման մենեջերները, տանտերերը, ավտոկայանատեղերի համակարգողները և առանձին տարածքների կառավարիչը: Ընկերությունը փնտրում է վերավաճառողների (դիստրիբյուտորներ):

Ծածկագիր. BORO20160907002

Մեծ Բրիտանական ընկերությունը փնտրում է մարքեթինգային գործակալություններ՝ ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում

Մեծ Բրիտանական նորարարական ընկերությունը մշակել է շաքարախտի մոնիթորինգի և կառավարման համար բացառիկ խելացի բջջային հավելված, որը գործում է հեռու տարածության վրա: Համակարգը ինտեգրում է անլար կապի ժամանակակից արբանյակները սմարթ հավելվածների և ամպային հաշվիչ տեխնոլոգիաների հետ: Ընկերությունը ներկայումս, ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում, ցանկանում է համագործակցել մարքեթինգային գործակալությունների հետ, որոնք կարող են օգնել ընկերությանը իրենց ապրանքանիշի մշակման գործում, ինչը կնպաստի իրենց կողմից ստեղծված հավելվածի մենկարկին:

Ծածկագիր. BRUK20170523001

Հունական ՓՄՁ-ն ցանկանում է համագործակցել առևտրային գործակալի պայմանագրի շրջանակում:

Հունաստանում գործող ընկերությունը մշակել է առցանց հարթակ, որը հարցաթերթիկների և հաշվիչների օգտագործմամբ խորհրդատվական ծառայություններ է մատուցում այն հեռանկարային ձեռնարկատերերին, որոնք իրենց բիզնեսը հիմնելու հարցում ուղղության կարիք ունեն: Հունական ընկերությունը փնտրում է SS ոլորտում փորձառություն ունեցող գործընկերներ, հաղորդակցման և/կամ մարքեթինգային ընկերություններ, որոնք առևտրային գործակալի պայմանագրի երկարատև համագործակցության շրջանակում կնպաստեն առցանց հարթակի տարածմանը:

Ծածկագիր. BOGR20171024001



Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներին:

Լեհական ընկերությունը հանդիսանում է կոսմետիկ միջոցների, դերմո-կոսմետիկայի և աքսեսուարների (արհեստական թարթիչներ, խոզանակներ) լայն տեսականու արտադրող և դիստրիբյուտոր: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներին:

Ծածկագիր. BOPL20170531002

Իսպանական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներին

Իսպանական (Կատալոնական) ընկերությունը, որն ունի 70 տարվա փորձ և հանդիսանում է բարձրորակ կոսմետիկ միջոցների, սանրերի և այլ խնամքի միջոցների արտադրող, փնտրում է մեծածախ վաճառք իրականացնող անձանց և դիստրիբյուտորներին՝ երկարաժամկետ համագործակցություն հաստատելու ակնկալիքով:

Ծածկագիր. BOES20160421001

Չեխական ընկերությունը փնտրում է բնական կոսմետիկ միջոցներ արտադրողներին

Չեխական ընկերությունը հանդիսանում է բնական կոսմետիկայի մեջ օգտագործվող կանեփի հիդրոլատի (առանց հոգեբանական ազդեցության) և եթերայուղի արտադրող: Ընկերությունը ենթակապալառուի պայմանագրի շրջանակներում փնտրում է բնական կոսմետիկա արտադրողներին, որոնք կարող են այս հավելումներն օգտագործել իրենց արտադրանքի մեջ:

Ծածկագիր. BOCZ20171020002

Լեհական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներին

Լեհական ընկերությունը, որն արտադրում է բնական նյութերից պատրաստված կոսմետիկ գործիքներ և աքսեսուարներ, փնտրում է դիստրիբյուտորներ՝ բնական կոսմետիկայի ոլորտում պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների շրջանում արտադրանքը տարածելու նպատակով:

Ծածկագիր. BOPL20161115002

Իսրայելական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներին

Պրոֆեսիոնալ մաշկի խնամքի ոլորտում գործող իսրայելական ընկերությունը մշակել է նորարարական ապրանքախումբ, որը կարող է օգտագործվել կոսմետիկ արդյունաբերության ոլորտում գործող մաշկաբանների կողմից: Շուկայում գտնվողների նկատմամբ առավելությունները ներառում են մաշկի բուժման արդյունավետությունը՝ առանց ակտիվ նյութի կոնցենտրացիայի սահմանափակումների և այլ կոսմետիկ/բժշկական միջոցների հետ համատեղման ընթացքում կողմնակի ազդեցության: Ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BOIL20171205002

Գործարար համագործակցության հարցումներ

Ռումինական վերավաճառողը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում

Ռումինիայում գործող բնական կոսմետիկ միջոցների, հավելումների և առողջ սննդի դիստրիբյուտորը փնտրում է բնական, ԷԿՈ, ԲԻՕ հումք, սննդամթերք և կոսմետիկա, որը վաճառվելու է Ռումինիայում իր սեփական խանութում:

Ծածկագիր. BRRO20171207001



Գործարար համագործակցության առաջարկներ

Բժշկական տուրիզմի ոլորտում գործող լեհական ընկերությունը ցանկանում է համագործակցել

Բժշկական տուրիզմի ոլորտում գործող միջնորդն օգնում է հաճախորդներին գտնելու լավագույն մասնավոր հիվանդանոցները Լեհաստանում: Ընկերությունը պլանավորված բուժման ոլորտում տրամադրում է խորհրդատվություն և աջակցում է ճամփորդության նախապատրաստական հարցերում: Ընկերությունը մասնագիտացած է օրթոպեդիայի, ակնաբուժական, և այլ ծառայությունների մեջ: Նրանք ցանկանում են համագործակցել Եվրոպայում գտնվող բուժհաստատությունների հետ (բուժական տներ, կլինիկա, հիմնադրամներ, զբոսաշրջային գործակալություններ)՝ գործակալության պայմանագրի շրջանակներում խթանելու և առաջարկելու իրենց կողմից մատուցվող ծառայությունները:

Ծածկագիր. BOPL20171114001

Իսրայելական ընկերությունը ցանկանում է համագործակցել առևտրային գործակալի պայմանագրի շրջանակներում

Իսրայելական ընկերությունը մշակում և արտադրում է դեղագործական պրոդուկտներ, սկսած նախնական փուլերից մինչև առևտրային գործարկումը, ինչպես նաև մշակում է դեղագործական պրոդուկտներ (և սարքեր)՝ պատրաստված քիմիական բաղադրիչներից: Շուկայում գտնվողների նկատմամբ առավելությունները ներառում են ժամանակային մասշտաբով ճկունություն, գործընթացների իրականացման նորարարություն և մրցունակ գներ: Ընկերությունը ցանկանում է համագործակցել առևտրային գործակալի ծառայությունների մատուցման, համատեղ ձեռնարկության հիմնման և ֆինանսական պայմանագրերի շրջանակում:

Ծածկագիր. BOIL20171211001

Ռումինական ընկերությունը ցանկանում է համագործակցել

Ռումինական ընկերությունը մասնագիտացած է մետաղական իրերի, ինչպիսիք են՝ մետաղական դարակները, արխիվային դարակաշարերը, ատամնաբուժական կահույքը և նմանատիպ այլ փափուկ / չժանգոտվող պողպատից և ալյումինից պատրաստված պրոդուկտների արտադրության մեջ: Ընկերությունը ցանկանում է համագործակցել արտադրական կամ ենթակապալուի պայմանագրերի շրջանակում:

Ծածկագիր. BORO20171213001

Գործարար համագործակցության հարցումներ

Ռումինական դեղագործական ընկերությունը փնտրում է նոր մատակարարներ

Ռումինական ընկերությունը, որն առևտրականացնում է դեղագործական արտադրանքը, փնտրում է գործընկերներ, ովքեր ցանկանում են վաճառել իրենց արտադրանքը Ռումինիայում տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում: Ընկերության ուշադրության կենտրոնում են դեղագործական արտադրանքները, ինչպիսիք են սննդային հավելումները, կոսմետիկ միջոցները և մաշկի խնամքի համար նախատեսված կոսմետիկան:

Ծածկագիր. BRUK20160826001



Գործարար համագործակցության առաջարկներ

Չեխական արտադրողն առաջարկում է հանդես գալ որպես ենթակապալառու

Չեխական ընկերությունը, որը մասնագիտացած է հաճախորդների պահանջների վրա հիմնված արդյունաբերական բոլոր ճյուղերի համար մետաղական զանազան իրերի և բաղադրիչների մշակման, համաձուլման, դրոշմման գործում, առաջարկում է հանդես գալ որպես ենթակապալառու:

Ծածկագիր. BOCZ20171123001

Վրացական արտադրողը փնտրում է գործակալների, դիստրիբյուտորների և վերավաճառողների:

Վրացական ընկերությունը մասնագիտացած է հանրային, արդյունաբերական և հանգստի/սպորտային տարածքների համար նախատեսված պատրաստ տեղադրման վերջին սերնդի LED շարքի բացօթյա/ներքին լուսավորման լուծումների արտադրության բնագավառում, որոնք հիմնված են նորարարական տեխնոլոգիաների վրա, ապահովելով հուսալի ու երկարատև լուսատուներ: Փնտրվում են գործակալներ, դիստրիբյուտորներ և վերավաճառողներ՝ համագործակցության ակնկալիքով:


Ծածկագիր. BOGE20170627002

Ֆրանսիական ընկերությունը փնտրում է գործընկեր

Ֆրանսիական ընկերությունը զբոսաշրջության ոլորտի մասնագետների համար մշակել է 3D քարտեզագրման ծրագրային ապահովման լուծում՝ սենսորային սեղանի վրա: Սենսորային սեղանը հաճախորդներին ներքաշում է 3D վիրտուալ տարածք և ներկայացնում տուրիստական առաջարկը՝ հողային տարածքներ, արշավային ճանապարհ և այլ հետաքրքիր վայրեր: Հաճախորդները կարող են ներբեռնել բովանդակություն (հեծանիվային երթուղի, արշավային արահետ և այլն): Ընկերությունը ցանկանում է համագործակցել տուրիզմի ոլորտում հաճախորդների մեծ բազա ունեցող կազմակերպությունների հետ, որոնք կապահովեն ծրագրային լուծման տարածումը՝ առևտրային գործակալի պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. BOFR20171117001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Պրոգրեսիվ ապարատային ճարտարապետություն (hardware architecture), որը խոչընդոտում է վիրուսային ծրագրերը – փնտրում է լիցենզիաներ

Գերմանական ՓՄՁ-ն, որը հանդիսանում է էլեկտրոնային սարքեր արտադրողի տեղական սպասարկման գործընկեր և դիստրիբյուտոր, մշակել է պրոգրեսիվ ճարտարապետություն, որը խոչընդոտում է վիրուսային ծրագրերի գործարկմանը և հնարավորություն է ստեղծում որոնել արտադրողին: Համակարգը, համեմատած վիրուսային ծրագրերի հայտնաբերման ժամանակակից ծրագրային ապահովման լուծումների հետ, ունի մի շարք առվելություններ: ՓՄՁ-ն փնտրում է արտադրության լիցենզիա:

Ծածկագիր. [TODE20170721001](#)

Կանաչ քիմիա՝ կենսաբանական ակտիվ միացությունների արտադրության համար

Իսպանական հետազոտական խումբը մշակել է էկոլոգիապես մաքուր և ծախսարդյունավետ ընթացակարգ, β ամինասպիրտ ստանալու համար, որը արդյունաբերական մակարդակի վրա հանդիսանում է կենսաբանական ակտիվ միացությունների (մորֆոլիններ, ամինաթթուներ և այլն) հայտնաբերողը: Այս պրոդուկտները կարող են կիրառվել նաև դեղահաբերի սինթեզի ժամանակ: Գիտաշխատողները փնտրում են ընկերություններ, որոնք արտադրում են օրգանական բաղադրիչներ: Նրանք հետաքրքրված են կնքել լիցենզիայի կամ տեխնիկական համագործակցության համաձայնագրեր:

Ծածկագիր. [TOES20161019002](#)

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Գերմանական ընկերությունը փնտրում է քիմիական հավելումներ՝ խողովակաշարերի խցանումները կանխելու նպատակով

Քիմիական արդյունաբերության բնագավառում գործող գերմանական ընկերությունը փնտրում է հավելումներ, որոնք կարող են կանխել յուղային հիմքով հեղուկների թափանցումը խողովակաշարերի մեջ: Նշված տեխնիկական առաջարկը կարող է իրականացվել համատեղ ձեռնարկության, լիցենզիոն կամ գիտահետազոտական համագործակցության պայմանագրերի շրջանակում:

Ծածկագիր. TRDE20171211001

Մինթետիկ տեքստիլ արտադրանքի մշակում

Կորեական ՓՄՁ-ն զբաղվում է անկողնային պարագաների արտադրությամբ և առևտրով: Կորեական ՓՄՁ-ն փնտրում է մի ընկերություն, որը կարող է մշակել գործվածքների, դրանց արտաքին տեսքի և տարբեր երկարության գործվածքների նախագծման պահանջներին համապատասխանող մեծ զգայունություն ունեցող նյութեր: Ընկերությունը ցանկանում է համագործակցել տեխնիկական աջակցության, լիցենզիոն պայմանագրի և տեխնիկական համագործակցության պայմանագրի շրջանակներում:

Ծածկագիր. TRKR20171025001

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2018 թ. -ի փետրվար, մարտ ամսիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Փետրվար

01/02/2018	<p>Միջազգային Բիզնես Ֆորում Կահուլում, Մոլդովայի Հանրապետություն (Կահուլ, Մոլդովա)</p> <p>Միջոցառումը տեղի է ունենալու “MADE IN MOLDOVA” ազգային 17-րդ ցուցահանդեսի շրջանակներում, որը համարվում է ամենակարևոր ցուցահանդեսը Մոլդովայում: Ֆորումի ընթացքում կանցկացվեն B2B հանդիպումներ: Ֆորումի ընթացքում ակնկալվում է շուրջ 100 ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցությունը հետևյալ ոլորտներից՝ գյուղատնտեսություն, ինֆորմացիոն և հաղորդակցության տեխնոլոգիաներ, տեքստիլ, շինարարություն, վերականգնվող էներգիան, ավտոմոբիլային, ստեղծագործական արդյունաբերության:</p> <p>http://een.ec.europa.eu/tools/services/EVE/Event/Detail/21a6e060-60e6-49be-8979-6951945807b1?&nolayout=true</p>
26/02/2018 - 28/02/2018	<p>Mobile World Congress 2018 Brokerage Event (Բարսելոնա, Իսպանիա)</p> <p>Եթե դուք սկսնակ եք, ՓՄՁ, ներդրող, կազմակերպություն, գիտահետազոտական կենտրոն, կլաստեր կամ բիզնես գործակալ, որը հետաքրքրված է բջջային ոլորտով, ապա այս միջոցառումը համապատասխանում է ձեր ակնկալիքներին:</p> <p>http://een.ec.europa.eu/tools/services/EVE/Event/Detail/4c5c63ad-2b5f-40c7-bf04-8e434f6f0923?&nolayout=true</p>

Մարտ

16/03/2018	<p>BUDGRYF & HOME: Գործարար համագործակցության հաստատման միջոցառում շինարարական, էներգիայի և ինտերիերի ձևավորման ոլորտների ներկայացուցիչների համար (Շչցենին, Լեհաստան)</p> <p>Այս միջոցառումը հասցեագրված է ՓՄՁ-ներին, գիտահետազոտական սուբյեկտներին և այլ կազմակերպություններին, որոնք հետաքրքրված են շինարարական, էներգիայի և ինտերիերի ձևավորման ոլորտներում համագործակցության հաստատմամբ: Այս միջոցառման թիրախն են հանդիսանում Եվրոպայից բազմաթիվ ոլորտները ներկայացնող ընկերությունները: Այսպիսով, եթե դուք ցանկանում եք կնքել նոր համագործակցություններ, ապա պատրաստ եղեք մի շարք դեմ առ դեմ հանդիպումների ձեռնարկատերերի հետ:</p> <p>http://een.ec.europa.eu/tools/services/EVE/Event/Detail/ef55f38b-adc6-46b2-99ad-d847fa3742cc?&nolayout=true</p>
------------	---

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

Նշում: Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են: